ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 243 (24524), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۵۲۴) ۲۴۳ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԿԻՐԱԿԻ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

یکشنبه – ۵ آذر ۱۴۰۲

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

Հրանտ Մարգարեանը՝ իրավիճակը փրկելու համար.

«ՄԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԻՏՔ, ԿԱՄՔ ԵՒ ՈՒԺԱԿԱՆՈՒԹԻՒՆ»



Ստորեւ ներկայացնում ենք «Կամաւորական շարժում» ՀԿ-ի նախագահ Հրանտ Մարգարեանի խօսքը Միեր Յարութիւնեանի 50-ամեակին նւիրւած միջոցառմանը:

Համատարած յուսահատութեան մեր օրերում, երբ կորցրել ենք մեր հայրենիքի մէկ մասը՝ Արցախը, երբ իրավիճակը թւում է անելանելի, երբ վտանգւած է արդէն Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը, իսկ հայոց պետականութիւնը կանգնած է լինել-չլինելու մարտահրաւէրի առջեւ, Հրանտ Մարգարեանի ելոյթի ոգին հէնց այն է, ինչ մեզ անհրաժեշտ է այսօր՝ ոտքի կանգնելու, մեր մէջքը շտկելու եւ պայքարելու:

Պայքարելու՝ յանուն հայրենիքի, արժանապատւութեան եւ ապագայի:

Չմոռանանք. ոչինչ աւարտւած չէ:

Պատերազմը շարունակւում է, իսկ վճռական ճակատամարտը դէռ առջեւում է:

ԽՄԲ.

Այսօր մեր Միերի, մեր ընկերոջ ծնունդն է՝ մենք եկել ենք իրեն այցի: Եկել ենք գլխիկոր, եկել ենք ամօթով: Ամօթով, որովհետեւ մեր տունը կիսատ է: Ամօթով, որովհետեւ Արցախը գերեվարւած է: Ամօթով, որովհետեւ կրկին մեր ժողովուրդը գաղթական է դարձել: Ամօթով, որովհետեւ մեր գործը կիսատ է: Միերի հետապնդած նպատակը առգոյ չէ: Ամօթով ենք, բայց ոչ կոտրւած: Ամօթով ենք, բայց ոչ ընկճւած: Ամօթով ենք, բայց ոչ յուսահատւած:

Մենք գիտակցում ենք, որ պէտք է նորից սկսել, պէտք է նորից ազատագրել, պէտք է նորից կռւել, եւ մեր մէջ վրէժը բոցկլտում է, վրէժի հուրը բոցկլտում է: Մենք մեր ատամները սեղմած ենք պահում եւ միակ յոյսը, որով կարողանում ենք ապրել, որով կարողանում ենք ոտքի կանգնել այն է, որ պայքարը շուտով սկսւելու է, որ մենք կրկին Հայոց լեռներից դէպի տափաստաններ ենք քշելու թշնամուն: Այդ յոյսն է, որ այսօր մեզ կարելի է դարձնում ոտքի վրայ մնալ:

Միերը կռւի մարդ էր՝ իր կեանքը կռիւն էր, աւելի ճիշտ կռիւը իր կեանքն էր: Նա կռւի մէջ այնպէս էր ինչպէս ձուկը ջրում, նա հերոս էր, բայց դա իր համար առաւելութիւն չէր համարում: Նա հերոս էր, բայց դա չէր ցուցադրում: Նա հերոս էր, բայց իրեն արտօնեալ չէր համարում, համեստ էր մեզանից մէկն էր, աննկատ էր, բայց հերոս էր:

Միերը պարզ մարդ էր, ամենաբարդ հարցերին նայում էր շատ պարզ, յստակ, ուղիղ եւ ասում էր՝ այս իշխանութիւնները եթէ ուզում են մեր երկիրը փրկել կարող ենք կողք-կողքի լինել, իսկ եթէ չեն ուզում թող մի կողմ կանգնեն, թող չխանգարեն, որովհետեւ եթէ մեզ հետ չեն այս պայքարում ուրեմն մեր դէմ են, մենք ենք իրենց դէմ, քանի որ յանուն հայրենիքի փրկութեան ոչ մի բան ինքնանպատակ չէ: Եւ Միերն այդ տեսակն էր, որ գիտակցում էր հայրենիքի արժէքը, գիտակցում էր, որ հայրենիքի արժէքը իր կեանքից թանկ է: Եւ Միերը կասէր այսօր շատ-շատերին, որ ինչ էք կառչել թշնամու ողորմածութեանը, ինչ էք կառչել օտարի գթասրտութեանը, ինչու էք դռնէդուռ ընկել, ինչու էք մեր փրկութիւնը ուրիշ տեղ փնտրում՝ յենւէ՛ք մեր ժողովրդի վրայ, կազմակերպէ՛ք մեր ժողովրդին: Կազմակերպէ՛ք մեր ժողովրդի ռեսուրսը, պայքարի դուրս եկէք, պատրաստւէք կռւի եւ միայն դրա մէջ է փրկութիւնը:

Մեզ երեք բան է անհրաժեշտ՝ միտք, կամք եւ ուժականութիւն:

Միտք, որ ելք գտնենք իրավիճակից: Միտք, որ ճանապարհ տեսնենք: Միտք, որ խոհեմ լինենք:

Կամք, որ չընկրկենք, կամք, որ չկանգնենք,կամք, որ յարատեւ պայքարին

(Շար. 8-րդ էջում)

Բանակցային գործընթացում Պաղեստինի Դիմադրութեան շարժման առաւելութիւնները

Գերիների փոխանակման եղանակների թելադրում, սիոնիզմի անհետացող հեգեմոնը, եւ վերջին հերթում յայտնւած ամերիկացի պատանդները

«ԱԼԻՔ» - «Էզեդդին Ղասամ»-ը ժամեր առաջ Կարմիր Խաչի ներկայացուցիչներին է յանձնել իսրայէլցի պատանդների երկրորդ խմբին:

«Ղասամ»-ի պաշտօնական լրահոսը երէկ երեկոյեան յայտարարութիւն տարածեց, որի համաձայն հումանիտար հրադադարի համաձայնագրի շրջանակներում «Ալ-Ղասամ» գումարտակները Կարմիր Խաչին են յանձնել 13 պատանդների, ինչպէս նաեւ 7 օտարերկրեայ քաղաքացիների:

Al-Mayadeen-ը մէջբերելով եգիպտական լրատւամիջոցների հրապարակումները նշել է, որ համաձայնագրի շրջանակներում մինչեւ կէսգիշեր եւս 100 բեռնատար մարդասիրական օգնութիւն պիտի տեղափոխւած լինէր Գազայի հատւածի հիւսիս:

Al-Manar-ը եւս յայտնել է, որ չնայած հրադադարի համաձայնագրի, սիոնիստական դիրքերից փարոս է արձակւել Լիբանանի սահմանային շրջաններում՝ Մալիքիա բազայի գլխավերեւում:

Բազմաթիւ այլ փաստեր կան, որոնք խօսում են կրակի դադարեցման ռեժիմի խախտման մասին, ինչը նպատակաուղղւած է իրավիճակը լարելուն: ԶԼՄ-ների հաւաստմամբ իսրայէլական կողմի նկրտումները պատճառ են դարձել, որպէսզի պատանդների փոխանակման երկրորդ փուլը մի քանի ժամով անորոշ վիճակի մատնւի:

Գերիների փոխանակման երկրորդ փուլն իրականացնելուց պաղեստինեան դիմադրութեան մերժումը պայմանաւորւած է հակառակորդին գերազանցող նրանց դիրքային առաւելութիւնով: Երէկ, երբ տեղի ունեցաւ փոխանակման առաջին փուլը, սիոնիստները, որպէսզի տպաւորութիւն ստեղծեն, թէ իրենք այնքան էլ վատ վիճակում չեն, անցան հրադադարի ռեժիմի պարբերաբար խախտումների՝ Գազայում պաղեստինցի քաղաքացիների վրայ կրակ բացելով, կամ խափանելով մարդասիրական

(Շար. 8-րդ էջում)

16 ամիս է՝ ԱԱԾ-ն դատարան չի ներկայացրել Հայաստան իմ մուտքի արգելքի պատճառները

Ֆրանսիայի Հայկական կազմակերպութիւնների Համակարգող խորհրդի համանախագահ Մուրադ Փափազեանը, որի մուտքը Հայաստան 2022 թ. յուլիսի 14-ին արգելւել է ՀՀ իշխանութիւնների կողմից, գրել է.

«Յարգելի ընկերներ, ես կրկին Հայաստան մուտքի իմ արգելքի տակ եմ: Ազգային անվտանգութեան ծառայութեան կայացրած որոշման դէմ իմ ներկայացրած հայցի նախնական դատական նիստը տեղի է ունեցել նոյեմբերի 23-ին:

Դատաւորը տարակուսեց, որ 16 ամիս անց Ազգային անվտանգութեան ծառայութիւնը դեռ չէր ներկայացրել իմ արգելքի պատճառները:

Դատական համակարգը հասկանում է, որ գործն ամբողջութեամբ դատարկ է: Դատաւորը 10 օր ժամանակ է տւել Ազգային անվտանգութեան ծառայութեանը՝ բացակայող փաստաթուղթը գործին աւելացնելու համար:

Յաջորդ նիստում, որը նշանակւած է յունւարի 25-ին, կը պարզի, թէ արդեօք ես իրաւատ եմ, ինչպէս ես եմ խնդրում, ֆիզիկապէս մասնակցել դատական նիստին: Շնորհակալութիւն բոլորիդ աջակցութեան համար»:

Մուրադ Փափազեան
ՀՅԴ Բիւրոյի անդամ, Ֆրանսիայի Հայկական կազմակերպութիւնների Համակարգող խորհրդի համանախագահ



TIME-ը տարւայ թոփ 100 լուսանկարներում ներառել է Արցախից բռնի տեղահանւողների լուսանկարը:
Լուսանկարը վերնագրւած է՝ «Տրանսպորտային միջոցը տեղափոխում է Լեռնային Ղարաբաղից փախստականներին, երբ նրաք հասնում են Կոռնիձոր, Հայաստան, սեպտեմբերի 25-ին»:

Photo by: Nanna Heitmann-The New York Times/Redux

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Զիւնիկ Աղաջանեան.

«Մինչեւ այս իշխանութեան աթոռին բազմելը երբեք ՀՀ տարածքային ամբողջականութիւնը հարցականի տակ չի եղել»

Ես ուզում եմ յիշեցնել, որ մինչեւ այս իշխանութեան աթոռին բազմելը երբեք ՀՀ տարածքային ամբողջականութիւնը հարցականի տակ չի եղել, դա անգամ քննարկման առարկայ չի եղել: Այս մասին News.am-ի հետ զրոյցում ասաց ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Զիւնիկ Աղաջանեանը՝ անդրադառնալով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութեանը, թէ Հայաստանի շուրջ կայ միջազգային կոնսոլիդացիա ՀՀ տարածքային ամբողջականութեան ճանաչման վերաբերեալ:

«Այսինքն այն հարցը, որ դա դարձել է անգամ ինչ-որ արծարծման խնդիր, դա այս իշխանութիւնների «ձեռքբերումն» է եւ դա մեր կորուստների, անիմաստ զոհաբերումների արդիւնքն է, որն ընդհանրապէս քայքայել է մեր ամբողջ անվտանգային համակարգը եւ Հայաստանի տարածքները դրել կենդանի սպառնալիքի տակ: Եւ այստեղ լինի արեւմտեան ընկալում, կամ ոչ արեւմտեան ընկալում, թէեւ ես վստահ եմ, որ «միջազգային հանրութիւն» ասելով այս իշխանութիւնը բացառապէս նկատի ունի Արեւմուտքը, սակայն այդ խոստումները գործում են այնքան ժամանակ, քանի դեռ իրենք չեն հասել իրենց նպատակներին»,-ասաց նա:

Զիւնիկ Աղաջանեանի խօսքով՝ ցանկացած պետութիւն ինքն է իր տարածքային ամբողջականութեան երաշխաւորը, ոչ թէ ինչ-որ արեւմտեան ընկալումներ, ինչ-որ կոնսոլիդացիաներ կամ ինչ-որ միջազգային հանրութիւն:

«Միջազգային հանրութիւնը դատում է այնքանով, ինչքանով դու ինքդ քեզ պաշտպանում ես եւ ինքդ ես քո շահերն առաջ մղում եւ այդ շահերին հասնելու համար միջազգային իրաւունքի նորմերից բխող քո բոլոր շահերն ու իրաւունքները պաշտպանում՝ համապատասխան գործիքակազմերը օգտագործելով, ոչ թէ դրանք տապալում ու զոհաբերում, խեղաթիւրում անգամ բանակցային փաթեթները եւ միջազգային պայմանագրերը, այդ թւում Ալմա Աթայի հռչակագիր կոչեցեալը, որը բացարձակապէս չի ասում այն, ինչը փորձում են մատուցել եւ ներարկել մեր հանրութեան գլուխների մէջ:

Այս պարագայում միջազգային հանրութիւն կոչւածն ուղղակի նայում է, դիտարկում է եւ եթէ դու պատրաստ ես քեզ, քո ժողովրդին, քո հայրենիքը զոհաբերել, ոտնատակ տալ այլ երկրների շահերը սպասարկելու համար, այդ միջազգային հանրութիւնը երբեք «ոչ» չի ասի»,- ընդգծեց դեսպանը:

Աշոտ Ղուլեան.

«Ցաւօք, այսպիսի վատ յարաբերութիւններ Հայաստանի ու Արցախի միջեւ չեն եղել որեւէ կառավարման օրօք»

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նախկին նախագահ, Արցախի ժողովրդավարական կուսակցութեան նախագահ Աշոտ Ղուլեանի գնահատմամբ՝ եթէ Արցախից բռնի տեղահանուած արցախահայութեան՝ Արցախ վերադառնալու մասին են խօսում, ապա դա անպայման պէտք է ինչ-որ ծրագրի տեսքով լինի: Սակայն դրա համար անպայման պէտք է ունենալ Արցախի պետականութիւն:

«Որպէս Արցախի պետականութիւն՝ այն անպայման պէտք է լինի, որպէսզի մենք հարկ եղած դէպքում, երբ դրա անհրաժեշտութիւնը ծագի, կարողանանք այդ նոյն ժողովրդին կազմակերպել: Արցախ վերադառնալու հետ է կապւած նաեւ այն, թէ մենք ինչպիսի կարգավիճակ ենք տալիս այսօր ՀՀ տարբեր մարզերում, Երեւանում բնակւող արցախցիներին: Դա ժամանակաւո՞ր կարգավիճակ է, թէ՞ մենք ինչ-որ բան հիմնովին փոխում ենք, յետոյ շատ դժւար է լինելու նոյն վերադառնալու հետ կապւած մարդկանց իրաւաքաղաքական ներկայ կարգավիճակը մէկ անգամ էլ փոխել»,- «Արցախ. Ընթացիկ հարցեր եւ հեռանկարներ» քննարկման ժամանակ ասել է Աշոտ Ղուլեանը:

Ըստ նրա. «Ցաւօք, այսպիսի վատ յարաբերութիւններ Հայաստանի ու Արցախի միջեւ չեն եղել որեւէ կառավարման էլիտաների օրօք»,- նշել է Ղուլեանը՝ յաւելելով.

«Արցախի պետականութիւնը պահպանելու թեման այսօրւայ թեմա չէ միայն, այն ապագայի թեմա է: Եթէ մենք մտածում ենք մեր ընդհանուր հայկական պետականութեան մասին, շատ կարեւոր է, որպէսզի Արցախի պետականութիւնը կարողանանք շատ պահել: Ինձ համար զարմանալի է, որ կարծես մենք 10 օրում մոռացութեան ենք տւել այն, ինչը 30 տարի շարունակ եղել է մեր հայկական միասնական օրակարգում: Մենք մոռացել ենք 1988 թւականի ազգային զարթօնքը, Արցախի տւած հպարտութեան զգացումը, որ ամբողջ Հայաստանը, Սփիւռքը, հայկական բոլոր գաղթօջախները դրանով են ապրում: Մենք 25 եւ աւելի տարիներ այդ հպարտութեան զգացումը կրել ենք: Եթէ մենք այս հարցերը մեր մտքից հանենք, շատ դժւար է տեսնել մեր ժողովրդի ապագայ ստրատեգիան:

Ամէն մի արցախցու երազանքն է՝ վերադառնալ իր երկիր, ծննդավայր, իր տուն: Ունենք տխուր իրողութիւններ, երբ մարդիկ տեսանիւթերով ստանում են իրենց տների թալանը, աւերումը: Միամիտ է մտածել, որ Ադրբեջանի ներկայացուցիչները փակում են հայերի դռները, կնքում են կամ յատուկ պահպանութեան տակ են առել: Եթէ մենք վերադարձի իրաւունքի հետ չկարողանանք ապահովել մեր ինքնորոշման իրաւունքը, ապա մեզ սպասւում է հերթական հիասթափութիւնը»:

168.am

Վարդան Ոսկանեան.

«ՀՀ-ում ոմանք վախենում են արտաբերել «Արցախ» անունը, Ադրբեջանում՝ բարբաջում «Արեւմտեան Ադրբեջանի» մասին»

Մինչ Հայաստանում ոմանք վախենում են գրել կամ արտաբերել պատմական եւ ներկայիս լեգիտիմութեան առումով անխոցելի Արցախ հինաւուրց հայկական տեղանունը, Հայաստանից բռնազաւթած Նախիջեւանում Բաքւի բարբարոսական վարչախմբի պետական մարմինները ոչ միայն չեն խորշում Հայաստանի Հանրապետութեան տարածքը կոչել պատմութեանը եւ արդիականութեանն անյայտ ամբողջովին կեղծ ինչ-որ «Արեւմտեան Ադրբեջան» բարբաջանքով, այլ նաեւ այսօր պաշտօնապէս մեկնարկ են տալիս, այսպէս կոչւած, «արեւմտեան ադրբեջանցիների» համաժողովի: Այս մասին իր տելեգրամ ալիքում գրել է իրանագէտ Վարդան Ոսկանեանը:

«Նշւած «միջոցառման» կազմակերպիչներն են բռնազաւթած Նախիջեւանում Բաքւի բռնապետի լիազօր ներկայացուցչութիւնը, արհեստածին Ադրբեջանի կրթութեան եւ գիտութեան նախարարութիւն յորջորջւող հիմնարկը, բռնազաւթած Նախիջեւանի պետական համալսարան կոչեցեալը եւ այլն:

«Միջոցառման» քարոզչական ուղեկցութեան շրջանակներում Բաքւի բարբարոսական վարչախմբի պետական քարոզչամեքենան խօսում է նոյնիսկ Հայաստանի (իրենց «եզրաբանութեամբ»՝ իբր «Արեւմտեան Ադրբեջանի») արհեստածին «Ադրբեջանի գիրկ վերադարձնելու» եւ այլ նմանօրինակ ցնորաբանութիւնների մասին:

Իսկ մեզանում, ցաւօք, ոմանք վախենում են ոչ միայն երազել կամ ծրագիր կազմել Արցախը վերադարձնելու, այլ նոյնիսկ մտքի ծայրով անցկացնել դա, մինչդեռ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումն իսկ մեծ երազանքի արգասիք է՝ այն երազանքի, որի ծրագիրը դեռեւս հեռաւոր 1773 թ. հրապարակւել էր հեռաւոր Հնդկաստանում»:

Հեռացէ՛ք տարածաշրջանից

Պաշտպանութեան նախարարի կոչը՝ Արեւմուտքին

«ԱԼԻՔ» - Իրանի պաշտպանութեան նախարար գեներալ- մայոր Ամիր Մոհամմադռեզա Աշթիանին ասել է. «Տարածաշրջանում ԱՄՆ-ի, եւ եւրոպական որոշ երկրների ներկայութիւնը կը յանգեցնի ողջ տարածաշրջանի, այդ թւում՝ Դիմադրութեան առանցքի արձագանգին, եւ ես խորհուրդ կը տամ օտար երկրներին՝ հեռանալ տարածաշրջանից եւ հեռու մնան լարւածութիւն ստեղծելուց»:

ԻՄՆԱ-ի համաձայն՝ նախարարը, անդրադառնալով տարբեր երկրների կողմից սիոնիստական ռեժիմի եւ նրա կողմնակիցների նկատմամբ քաղաքական եւ տնտեսական ոլորտներում լայնածաւալ ճնշումներին, ասել է, որ մեր տարածաշրջանի ժողովուրդը օկուպանտ եւ մանկասպան ռեժիմի ամբողջական տապալման ականատեսը կը լինի, եւ մեր տարածաշրջանում կը վերականգնւի իրական անվտանգութիւնը:

Պաշտպանութեան նախարարը անդրադառնալով Գազայի պատերազմին, ասել է, որ «Ալ-Աքսայի փոթորկ»-ի գործողութիւնը սկսւելով, սիոնիստական ռեժիմը անակնկալի եկաւ բոլոր առումներով եւ կատարելապէս յայտնւեց անդունդի եզրին, իսկ դա նշանակում է «ծանր պարտութիւն»: Գեներալ Աշթիանին յայտարարել է, որ այս տարածաշրջանը շատ կարեւոր, ռազմավարական եւ զգայուն է էներգահաղորդման գծերի անցման բերումով:

Գեներալ Աշթիանին, անդրադառնալով ԱՄՆ-ի ռազմավարական եւ հաշւարկային սխալներին, յատկապէս տարածաշրջանում, ընդգծեց. «Ամբողջ աշխարհին ապացուցւած է, որ սիոնիստական ռեժիմը ոճրագործ ռեժիմ է, եւ ԱՄՆ-ի ամենամեծ սխալը այս մանկասպան ռեժիմին աջակցելն է եւ նրանք պէտք է իմանան, որ հատուցելու են այս բոլոր ոճրագործութիւնների համար»:

Ամիր Աբդոլլահեան.

«Գազայի հարցի լուծումը որոշում են Պաղեստինի ժողովուրդը եւ Պաղեստինի Դիմադրութիւնը»

«ԱԼԻՔ» - Իրանի արտաքին գործերի նախարար Հոսէյն Ամիր Աբդոլլահեանը, ասել է. «Եթէ չլիներ ԱՄՆ-ի աջակցութիւնը Իսրայէլի նկատմամբ, ապա այս կեղծ ռեժիմը իզօրու չէր լինելու շարունակել պատերազմը Պաղեստինի իսլամական Դիմադրութեան շարժման (ՀԱՄԱՍ) դէմ»:

Հոսէյն Ամիր Աբդոլլահեանը այս մասին յայտարարել է «Ալ-Ջազիրա» հեռուստալիքին տւած հարցազրոյցում, եւ ասել է. «Իրանի նախագահը իսլամական երկրների ղեկավարների եւ BRICS-ի ղեկավարների հետ համատեղ նախաձեռնեց այս պատերազմի յանցագործութիւնները դադարեցնելու գործնական նախաձեռնութիւն»:

ԻՄՆԱ-ի համաձայն՝ արտաքին գործերի նախարարը նշել է. «ԱՄՆ-ից հաղորդագրութիւններ ենք ստացել առ այն, որ իրենք չեն ցանկանում ընդլայնել պատերազմի շրջանակը»:

Հարցազրոյցի այլ բաժնում Ամիր Աբդոլլահեանը ընդգծեց. «Իրանի պատասխանն ամերիկացիներին հետեւեալն էր, որ նրանք արդէն իսկ ընդլայնում են պատերազմի շրջանակը՝ աջակցելով Իսրայէլին եւ զէնք փոխանցելով այս կեղծ ռեժիմին»:

Իրանի արտգործնախարարը նաեւ ընդգծել է, որ Գազայի հարցի լուծումը որոշում են Պաղեստինի ժողովուրդը եւ Պաղեստինի Դիմադրութիւնը:



Արցախի թեմի առաջնորդ.

«Արցախի հայաթափումը ոչ միայն Ադրբեջանի ծրագրերի մէջ էր ներառուած, այլեւ գերտէրութիւնների»

Անկախ այն հանգամանքից, թէ ՀՀ պետական իշխանութիւններն ինչ որոշումներ կը կայացնեն Արցախի Հանրապետութեան իշխանութիւնների եւ նրա սահմանադրական իրաւունքի վերաբերեալ, Արցախի թեմը կրօնական կառոյց է, եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր գործառոյթներն ունի:

168TV-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում ասաց Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը՝ անդրադառնալով ՀՀ-ում Արցախի հոգեւոր թեմը պահպանելուն, թեմի խնդիրներին եւ անելիքներին:

Թեմն այս պահին կտրուած է իր բնօրրան Արցախից, ինչը, Սրբազանի խօսքով՝ նշանակում է, որ այն չի կարողանում լիարժէք գործել, քանի որ թեմն առաջին հերթին հաստատւում է մի տարածքի վրայ, որը նշանակում է վարչական տարածք եւ վերահսկողութիւն այդ վարչական տարածքում գոյութիւն ունեցող վանքերի, եկեղեցիների, մշակութային կոթողների, նաեւ հաւատաւոր իր զաւակների, հաւատաւոր հօտի, ծխերի նկատմամբ:

«Այս ամէնը չկայ, եւ թեմն առանց հաւատացեալների, քահանաների, առանց համապատասխան եկեղեցիների, անշուշտ, լիարժէք չի կարող գործել: Բայց այն ամէնը, ինչ հոգեւոր ու բարոյական է, նկարագիր ունի հետագայ ծրագրերի համար, անշուշտ, դրա համար թեմը պէտք է մնայ եւ շարունակի գործել:

Անշուշտ, դժւար երեւոյթ է Հայաստանում պահպանել Արցախի բարբառը, սովորութիւնները, որովհետեւ է՛ւ բարբառը, սովորութիւնները, է՛ւ կենցաղը, խոհանոցը հիմնւած են լինում քո երկրի, ապրուստի վրայ: Այսօր համայնքները չկարողացան տեղաւորուել միասնական առումով: Կարծում եմ՝ շատ դժւար պէտք է լինի այդ ընթացքը նորից վերականգնել, վերարտադրել: Բայց մշակութաբանները, լեզուաբանները եւ մշակութային գործիչները, մտաւորականները ջանք ու եռանդ չպէտք է խնայեն նման աշխատանքները կատարելու համար: Պէտք է կարողանան պահպանել այդ արժէքը, դա Արցախի ինքնութիւնն է»,- յաւելեց Արցախի թեմի առաջնորդը:

Մեր զրուցակիցը խօսեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան հարցերով գրասենեակի գործառոյթներից: Սրբազան Հայրը փոխանցեց, որ գրասենեակը բացւել է Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութեամբ՝ պատերազմից յետոյ: Այսօր գրասենեակը լիարժէք աշխատում է եւ իրականացնում է իր գործառոյթները:

«Գրասենեակը կարեւոր առաջադրանքներ է կատարում, մասնաւորապէս, Սփիւռքում եւ այն համապատասխան կառոյցների հետ, որոնք միտւած են կրթական, մշակութային արժէքների պահպանմանը, դրանք միջազգային կառոյցներն են, որոնց առնչութեամբ գրասենեակը լիարժէք, կոնկրետ աշխատանքներ է կատարում, որպէսզի մեր յուշարձանների նկատմամբ վայրագութիւնները, ոչնչացումը, փակելը կանխեն, պղծումից ազատեն: Իսկ այդ ամէնը կանխելու համար, այս ամենի մասին պէտք է լիարժէք ներկայացւի համապատասխան կառոյցներին, որ նրանք էլ տեղեակ լինեն, թէ ինչ է կատարւում Արցախում: Հիմա մենք Արցախում չենք, եւ այդ կառոյցների ուշադրութիւնից կտրուած են ադրբեջանական վայրագութիւնները: Տարբեր ճանապարհներով պէտք է տեսնենք, թէ ինչ է Արցախում կատարւում, հետագայում կարողանանք անգամ ուխտագնացութիւններ կազմակերպել դէպի սրբավայրեր, մեր աչքով տեսնենք, թէ ինչ է կատարւում, նաեւ աղօթք բարձրացնենք»,- շեշտեց Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը:

Այսօր Սրբազան Հայրը լիարժէք տեղեկութիւն չունի Արցախի խոշոր հոգեւոր կենտրոնների ներկայիս ճակատագրի ու վիճակի վերաբերեալ, Դադիվանքի, Գանձասարի, Ամարասի, սակայն որքանով տեղեակ է՝ խաղաղապահները Դադիվանքից դուրս են եկել, թէ ինչ է այսօր տեղի ունենում այնտեղ՝ տեղեակ չէ: Մէկ բան յստակ է, որ այն, ինչը տեսանելի է ադրբեջանցիների համար՝ խաչը եւ քրիստոնէական այլ նշանները, նրանք միանգամից հանում են ու ոչնչացնում, ցոյց տալով, որ հայկական քրիստոնէական շեշտադրումն Արցախում պէտք է նւազի:

Պատերազմից ուղիղ 10 օր առաջ՝ սեպտեմբերի 9-ին, Սրբազան Հայրը կոչ էր տարածել, հայ ազգին յորդորել էր գործել միասնաբար եւ իմաստնութեամբ՝ մէջբերելով Ներսէս Շնորհալու համերաշխութեան բանաձեւը՝ «Միութիւն կարեւոր հարցերում, ազատութիւն երկրորդական հարցերում եւ Սէր ամէն ինչում», այսօր մեր հաղորդաշարի եթերում Սրբազան Հայրն ասաց, որ ծրագրեր կային, որոնց դիմակայելը վեր էր արցախահայութեան ուժերից:

«Արցախի հայաթափումը ոչ միայն Ադրբեջանի ծրագրերի մէջ էր ներառուած, այլ կարծում եմ՝ այստեղ գերտէրութիւններն էին իրենց ծրագրերն իրականացնում: Յաւօք, մենք չկարողացանք հասկանալ ու ընկալել, որ այդ լուրջ ծրագրերի մէջ է Արցախը: Արցախը միայնակ չէր կարող դիմակայել: Արցախցիները եւ Պաշտպանութեան բանակի մեր զինւորները, նաեւ կամաւորականներն ամէն ինչ արեցին, քաջաբար մարտնչեցին, սակայն ուժերի անհաւասարակշիռ պայմաններում էր, որ մենք զիջեցինք Արցախը: Հնարաւոր չեղաւ մէկ օրից աւելի պատերազմել, որովհետեւ մեր պաշարները, ոչ միայն զինամթերքի առումով, նւազ էին, այլ նաեւ Ադրբեջանը նախապէս ծրագրաւորել ու Արցախը վերցրել էր շրջափակման մէջ, այդ պատճառով Արցախը միայնակ էր մնացել: Փորձեցին Արցախում ցեղասպանութիւն իրականացնել եւ երեխաներին, կանանց, բնակչութեանը փրկելու համար կայացւեց այդ յայտնի որոշումը: Իմ խօսքը ժողովրդին էր վերաբերում, Արցախում մնալու, Արցախը պահպանելու ու նրա նշանակութեանը, բայց նորից եմ կրկնում՝ շատ գերհզօր ճնշումներ կային, որի առաջ մենք չկարողացանք դիմակայել: Ըստ իս, լուրջ փոփոխութիւնների պարագայում պէտք է հնարաւոր լինի, որպէսզի մենք կրկին վերադառնանք Արցախ»,- ընդգծեց մեր զրուցակիցը:

Սրբազան Հայրը համամիտ չէ այն մարդկանց հետ, որոնց կարծիքով՝ Արցախի թեման փակւած է: Նրա բնորոշմամբ՝ միշտ չէ, որ մի թեմայի շուրջ շատ խօսելը տալիս է դրական արդիւնք, կան թեմաներ, որոնց մասին կարող ես չխօսել, բայց գործել:

«Կարծում եմ՝ Արցախը չընկաւ, Արցախը մնում է, եւ Արցախի թեման փակւած չէ:

Այսօր, ինչպէս հոգեւորականութիւնը, այնպէս էլ իւրաքանչիւր քաղաքացի ունի առաքելութիւն: Մենք ասում ենք, չէ՞, որ այն մարդը, որն իր առաքելութեան մէջ չէ, ուրեմն՝ սատանայի տիրոյթում է: Կը նշանակի, որ ամէն մէկս մեր առաքելութիւնն ունենք՝ է՛ւ եկեղեցին, է՛ւ իշխանաւորները, է՛ւ հասարակ ժողովուրդը, ամէն մէկն իր անելիքն ունի: Եթէ մենք մեր անելիքների ծիրից ներս ենք, հնարաւոր կը լինի ապահովել միասնականութիւնը եւ դա կատարել սիրով: Կարեւոր աշխատանքի դէպքում է, որ սէրը մեր մէջ աւելի է հզօրանում, որովհետեւ դա կարեւոր նպատակներին է ուղղւած»,- ասաց Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը:

Նրա դիտարկմամբ, միշտ չէ, որ հայ ազգի գլխին դրւում է յաղթանակի պսակը, լինում են պահէր, երբ ստորացման եւ նաստացման փշէ պսակներ են դրւում: Սակայն պէտք է կարողանալ դուրս գալ այդ իրավիճակից, յաջողելու դէպքում կը նշանակի, որ հայ ազգն իր մէջ կարող է ունենալ նպատակ:

«Մեր անկեալ վիճակից պէտք է ոտքի կանգնենք՝ փշէ պսակը հանելու եւ յաղթական պսակին արժանանալու համար, որը կը բերի Արցախի ազատագրում եւ յաղթական վերադարձ: Արցախն այսպէս թողնելն առնւազն անընդունելի ու ակնկալելի պէտք է լինի հետագայ սերունդների համար, մենք պէտք է այդ ծրագիրը կեանքի կոչենք»,- յաւելեց Սրբազան Հայրը:

Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը խօսեց նաեւ Ադրբեջանի կողմից գերեվարւած եւ Բաքւի բանտերում գտնւող Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարների եւ հարիւրաւոր քաղաքացիների մասին եւ ասաց.

«Ամէն ինչ պիտի արւի, որպէսզի մեր խորհրդանիշերը վերադառնան՝ Արցախի նախագահները, մեր նւիրեալ զինւորականները, ԱԺ նախագահը, նաեւ մեր հայորդիները»:

Դաւիթ Ջամալեան.

«ՀՀ իշխանութիւնները ՀԱՊԿ-ից Հայաստանը դուրս բերելու հարց են դնելու շուտով»

Օրերս Փաշինեան-Լուկաշենկօ հեռախօսազրոյցից պարզ էր դարձել, որ ՀԱՊԿ Հաւաքական անվտանգութեան խորհրդի՝ նոյեմբերի 23-ին Բելոռուսիայի մայրաքաղաք Մինսկում կայանալիք նիստին Փաշինեանը չի մասնակցի: Յետոյ նաեւ տեղեկացանք՝ Հայաստանը Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան իր գործընկերներին խնդրել է օրակարգից հանել երկրին օգնութեան մասին փաստաթուղթը:

Այս ամենին զուգահեռ էլ՝ ՀՀ ԱԽ քարտուղար Արմէն Գրիգորեանն էլ վստահեցրել էր, որ ՀԱՊԿ նիստին չմասնակցելը դեմարշ չէ, ու ՀՀ օրակարգում ՀԱՊԿ-ը լքելու հարց չկայ, սակայն մէկ այլ հարթակում չէր բացառել «արտաղաշինքային պետութիւն դառնալու գաղափարը»:

Ռազմական փորձագէտ Դաւիթ Ջամալեանը ՀԱՊԿ-ին հակադրւելու հերթական դրւագն այս իշխանութիւնների պարագայում օրինաչափ է համարում: Ռազմական փորձագէտը կարծում է՝ այդուհանդերձ, ՀՀ իշխանութիւնները շուտով Հայաստանը ՀԱՊԿ-ից դուրս բերելու հարց են դնելու:

«ՀԱՊԿ-ին այլընտրանք չկայ: ՀԱՊԿ-ը մեզ համար նոյն ՌԴ-ն է՝ պարզապէս ռուսական օգնութիւնը ստանալու մի այլընտրանքային ձեւաչափ,- 168.am-ի հետ զրոյցում նշեց Դաւիթ Ջամալեանը՝ մանրամասնելով,- ՀԱՊԿ-ի առաջարկած ռազմատեխնիկական օգնութիւնը մերժել, ՀԱՊԿ-ից դուրս գալ՝ նշանակում է դառնալ շատ մատչելի թիրախ թուրք-ադրբեջանական տանդեմի համար: Այս իշխանութեան գերնպատակը ցանկացած՝ անգամ տարածքային ու մարդկային կորուստների գնով Հայաստանը ՌԴ-ից հեռացնելն է (իրենք, ի դէպ, այս առումով անկեղծ են):

Այս խմբակն ունի ինքնիշխանութեան վերաբերեալ այլասերւած պատկերացումներ: Իրենք «ինքնիշխանութիւն» ասելով՝ հասկանում են ՌԴ-ի հետ կապերի խզում. ոչի՛նչ, որ մենք կախւածութեան մէջ ենք յայտնւում Թուրքիայից, ոչի՛նչ, որ ռուսական ներկայութեանը փոխարինելու է թուրքականը, ոչի՛նչ, որ այստեղ մի քանի հարիւր հազար ադրբեջանցի վերաբնակեցի:

Հետեւաբար, ՀԱՊԿ-ին այս հակադրութիւնն օրինաչափ է. ես կարծում եմ՝ իրենք շուտով ՀԱՊԿ-ից Հայաստանը դուրս բերելու հարց են դնելու»:

Ռազմական փորձագէտը ցաւով է արձանագրում, որ ադրբեջանական հնարաւոր յարձակման մասին խօսոյթին զուգահեռ՝ մեդիահոսքերը կառավարելով՝ մոլորեցնում են հանրութեանը պատրանքով, թէ Ֆրանսիան մեզ ռազմատեխնիկական այնպիսի օգնութիւն է ցուցաբերելու, որ հնարաւոր կը լինի դիմակայել ադրբեջանական հարւածին:

«Սա մեծագոյն պատրանք լինելով հանդերձ՝ վտանգաւոր իրողութիւն է ձեւաւորում, որովհետեւ թմբիրի մէջ գտնւող հասարակութեանը մանիպուլացնելը նշանակում է էլ աւելի թուլացնել պաշտպանական իմունիտետը»,- յաւելեց նա:

Դիտարկմանը՝ այդուհանդերձ օբիեկտիւ իրաւացի չէ՞ նաեւ հանրային տարբեր շրջանակներում առկայ ՌԴ-ի հանդէպ դժգոհութիւնը, հակառուսական տրամադրութիւնների առկայութիւնը՝ հաշւի առնելով նաեւ Արցախում ռուսական խաղաղապահ առաքելութեան ձախողումը, ՀԱՊԿ-ից ակնկալիքների չարդարացումը՝ Դաւիթ Ջամալեանն արձագանգեց.

«Իրաւացի չէ. այդ տրամադրութիւնները ձեւաւորւել են մեդիամանիպուլեացիաների հետեւանքով: Իրականում, ռուսական կողմին մենք որեւէ պահանջ, յանդիմանանք ներկայացնելու տեղ չունենք, որովհետեւ թէ՛ 44-օրեայի ժամանակ, թէ՛ դրանից յետոյ ռուսական կողմը պատրաստ է եղել շատ աւելի մեծ ծաւալով ներգրաււել գործընթացների մէջ, բայց միշտ հանդիպել է նիկոլական իշխանութեան արհեստականօրէն ստեղծւող պատնէշներին, խոչընդոտներին, եւ հիմա՝ արդէն բացայայտ ռազմատեխնիկական օգնութիւն ստանալու մերժմանը:

Մէկ տարի առաջ այս օրերին մերժում էին ՀԱՊԿ-ի կողմից այդ օգնութեան ստացումը, եւ իբրեւ հիմնաւորում՝ ասում՝ մենք պահանջում ենք, որպէսզի ՀԱՊԿ-ն Ադրբեջանին ճանաչի ագրեսոր: Հիմա հարց եմ տալիս՝ Ֆրանսիային նոյն պահանջը ներկայացրե՞լ էք, ինչ-որ ռազմավարական երկխօսութիւն էք սկսում թուրք-ադրբեջանական տանդեմի թիկունքին կանգնած բրիտանական կողմի հետ. այդ երկխօսութեան ընթացքում Ադրբեջանն ագրեսոր ճանաչելու պայման դրե՞լ էք բրիտանացիների առաջ (թէեւ ունակ էլ չեն պահանջներ դնելու, քանի որ տէրը ծառայի առաջ պահանջ դնել չի կարող»:

Ռազմական փորձագէտն ընդգծեց՝ ՀԱՊԿ-ին անդամակցելիս մեր գերխնդիրը եղել է սպառազինութիւնների անհրաժեշտ ծաւալի կայուն մատակարարումներ ապահովելը, այլ ոչ թէ ՀԱՊԿ-ի ինչ-որ պետութեան, կամ ՀԱՊԿ գնահատականն Ադրբեջանին:

«Դա էլ է կարեւոր, բայց դա 4-րդ-ական կարգի հարց է՝ շօշափելի օգնութեան համեմատ, զէնք ստանալու համեմատ,- յաւելեց մեր զրուցակիցը, ապա այս համատեքստում յիշեցրեց,- վերջին ադէտի օրերին՝ սեպտեմբերի 19-ին, Թեհրանում գտնւող ՌԴ պաշտպանութեան նախարարը, ըստ հայկական ծագմամբ ռուս արեւելագէտ Կարինէ Գէորգեանի, ՀՀ իշխանութիւններին առաջարկել է այնպիսի սցենար խաղարկել, որը կը կայունացնէր իրավիճակն Արցախում (պարզապէս այդ սցենարը խաղարկելու համար հիմք պէտք է լինէր ՀՀ տարածքը): Օրւայ իշխանութիւնը մերժել է ռուսական կողմի առաջարկը:

Ես այսպիսի օրինակներ կարող եմ շատ բերել»:

Դաւիթ Ջամալեանը վստահեցրեց՝ իշխանութեան փոփոխութիւնից անմիջապէս յետոյ ռուսական կողմից կը կարողանանք ստանալ ամէն անհրաժեշտը՝ թէ՛ եղածը պաշտպանելու, թէ՛ կորուստները յետ բերելու համար:

Այդուհանդերձ, վերջին իրադարձութիւններին հետեւելով՝ ռազմական փորձագէտն այն եզրակացութեան է եկել, որ թէ՛ Նիկոլ Փաշինեանը, թէ՛ նրա շրջապատը ոչ թէ իշխանութիւնը պահելու հարց են լուծում այս քայլերով, այլ ճիշտ ժամանակին երկրից էւակուացւելու.

«Իրենք կատարում են այն հրահանգները, որոնք իջեցւում են իրենց՝ իրենց տէրերի՝ Արեւմուտքի կողմից: Եթէ փորձենք ռացիոնալ դիրքերից մօտենալ, ապա այս մարդիկ վաղուց թքած են ունեցել հայոց պետականութեան, հայոց շահերի վրայ, եւ հիմա իրենք կուրօրէն կատարում են պատւէրը՝ յանուն որի իրենց բերել են իշխանութեան:

Մոտիւացիան շատ յստակ է. յարմար պահի երաշխաւորւած էւակուացւելու եւ Արեւմուտքում իրենց կեանքը վայելելու խընդիր են լուծում: Թէպէտ, այո՛, կարելի է կարծել, որ Արցախը յանձնելուց յետոյ սրանք մնացին իշխանութեան, ինչ-որ ժամանակահատւածով երկարեց սրանց իշխանութիւնը, բայց գիտէ՞ք՝ մազից կախւած իշխանութիւն է. ցանկացած պահին ինչ-որ ֆորս-մաժոր կարող է իրենց սրբել-տանել, եւ իրենք դա շատ լաւ հասկանում են: Իրենք արդէն շատ նեղ անձնական հարց են լուծում, իսկ այդ դէպքում խօսել ազգային շահերի մասին՝ անիմաստ է»:

«Իմ երեւակայութեան Խաչատրեանը». տեղի կունենայ ցուցահանդէս-մրցոյթ՝ նւիրւած մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրեանի 120-ամեակին

Արամ Խաչատրեանի տուն-թանգարանում նոյեմբերի 27-ին ժամը 14:00-18:00-ն տեղի կունենայ «Իմ երեւակայութեան Խաչատրեանը» խորագրրով ցուցահանդէս-մրցոյթի բացումը՝ նւիրւած մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրեանի 120-ամեակի:

ՀՀ մարզերի, Երեւանի եւ Արցախից տեղահանւած շուրջ 39 արհեստագործ վարպետներ կը ներկայացնեն ձեռագործ աշխատանքներ, որոնք կրում են Խաչատրեանի ստեղծագործական ժառանգութեան ազդեցութիւնը:

Վարպետների պատրաստած արտադրանքը՝ դեկորատիւ-կիրառական արւեստի նմուշներ, գեղանկար, գրաֆիկա, քանդակ, յուշամեդալներ, մանրադրամներ, զարդեղէն, յուշանւէրային բնոյթի իրեր, կը տրամադրւեն Արամ Խաչատրեանի տուն-թանգարանին՝ ցուցասրահում ներկայացւելու համար:

Միջոցառումը կը նպաստի մշակութային ժառանգութեան կենտրոնացման պահպանմանը եւ արհեստագործական ներուժի ճանաչելիութեան բարձրացմանը:

Երեք անւանակարգում յաղթող ճանաչւած մասնակիցները կը ստանան դրամական պարգեւներ:

Յուցահանդէսը կը տեւի մինչեւ դեկտեմբերի 27-ը: Ծրագիրն իրականացւում է Երեւանի քաղաքապետարանի աջակցութեամբ, Արամ Խաչատրեանի տուն-թանգարանի գործընկերութեամբ:

Աշխարհը գրաւած ծիրանափողի պատրաստման նրբութիւնները

Դուդուկագործ վարպետը՝ մասնագիտութեան մասին

Դուդուկի մեղեդիները, կարելի է ասել, գրաւել են ամբողջ աշխարհը, հնչել են համաշխարհային մի շարք ֆիլմերում, տեղ են գտել հեղինակաւոր համերգային ծրագրերում՝ նպաստելով հայկական մշակոյթի հանրահռչակմանը: 2005 թւականին հայկական դուդուկի երաժշտութիւնը ճանաչւել է ԻՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ոչ նիւթական մշակութային ժառանգութեան գլուխգործոց, իսկ արդէն 2008-ին դուդուկը գրանցւել է ԻՒՆԵՍԿՕ-ի ցանկում: Դուդուկը կրկնակի եղէգային փողային գործիք է, որն ի յայտ է եկել դեռ շատ վաղ ժամանակներից:

Ինչպէ՞ս է պատրաստւում դուդուկը, ի՞նչ իւրայատուկ մօտեցում է անհրաժեշտ այս գործում: Այս եւ այլ հարցերին անդրադարձել է դուդուկագործ վարպետը՝ մանրամասնելով մասնագիտական նրբութիւնները:

Շուրջ 22 տարի աշխատելով ոլորտում՝ դուդուկագործ վարպետը նշեց, որ լաւ մասնագէտ լինելու եւ ճիշտ գործիք ստանալու համար պէտք է համբերատարութիւն, աշխատասիրութիւն եւ հետեւողական աշխատանք:

«Դուդուկը պատրաստելու ամենաառաջին կարեւոր պայմանն այն է, որ վարպետը պէտք է պատկերացում կազմի նիւթի մասին՝ տեւել դէպքում՝ փայտի: Եթէ նա ունի ձեռքի տակ որեւէ տեսակի փայտ, ապա պէտք է հասկանայ՝ կարո՞ղ է դրանից դուդուկ պատրաստել»,- ասաց Կարէն Մուքայէլեանը:

Նա նշեց, որ դուդուկը մշտապէս պատրաստել են տարբեր փայտերից, հիմնականում՝ պտղատու ծառերից, բայց ըստ մասնագէտի՝ դուդուկի համար ամենայարմարը ծիրանենու փայտն է: «Իզուր չէ, որ դուդուկն անւանում են նաեւ «ծիրանափող»»,- ասաց դուդուկագործը:

Իսկ հարցին, թէ 22 տարիների ընթացքում քանի՞ դուդուկ է պատրաստել՝ վարպետը դժւարացաւ պատասխանել՝ նշելով, որ այս տարիների ընթացքում գրեթէ հաւասարապէս շւի եւ այլ գործիքներ էլ է պատրաստել: Վարպետի պատրաստած դուդուկներով են իրենց կարիերան սկսել եւ կայացել մի շարք յայտնի դուդուկահարներ:

Մասնագէտն ուրախութեամբ նշեց, որ մեր օրերում եւս դուդուկի հանդէպ հետաքրքրւածութիւնն ու սէրը բաւականին մեծ է:

168.am

Շառլ Ազնաւուրի եւ Սերգէյ Փարաջանովի ծննդեան 100-ամեայ յոբելեաններն ընդգրկւել են ԻՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակաւոր մարդկանց եւ կարեւոր իրադարձութիւնների յոբելեանների 2024-2025 թթ. օրացոյցում



Նոյեմբերի 7-ից 22-ը Փարիզում ընթացող ԻՒՆԵՍԿՕ-ի գլխաւոր համաժողովի 42-րդ նստաշրջանի ընթացքում որոշում է ընդունւել Շառլ Ազնաւուրի եւ Սերգէյ Փարաջանովի ծննդեան 100-ամեայ յոբելեանները ԻՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակաւոր մարդկանց եւ կարեւոր իրադարձութիւնների յոբելեանների 2024-2025 թթ. օրացոյցում ընդգրկելու վերաբերեալ:

«Հայաստանի Հանրապետութեան կողմից վերոնշեալ յայտերը ներկայացւել են գործընկեր երկրների հետ համատեղ՝ ստանալով զգալի աջակցութիւն մի շարք անդամ երկրների եւ երկրների խմբի կողմից:

Մասնաւորապէս՝ Ֆրանսահայ հռչակաւոր երգիչ, երգահան, դերասան Շառլ Ազնաւուրի 100-ամեայ յոբելեանի վերաբերեալ յայտը համատեղ կերպով ներկայացւել է Հայաստանի եւ Ֆրանսիայի կողմից՝ Անդորրայի, Իտալիայի, Լիւքսեմբուրգի, Մոնակոյի, Պորտուգալիայի, Սենեգալի եւ աւելի քան 80 անդամ ունեցող ԻՒՆԵՍԿՕ-ի ֆրանկոֆօն դեսպանների խմբի աջակցութեամբ: Անւանի կինոռեժիսոր Սերգէյ Փարաջանովի 100-ամեայ յոբելեանի վերաբերեալ յայտը համատեղ կերպով ներկայացւել է Հայաստանի, Վրաստանի եւ Ուկրաինայի կողմից՝ ստանալով Կիպրոսի, Ֆրանսիայի, Իտալիայի, Լիբանանի եւ Լեհաստանի աջակցութիւնը:

Տեղեկանք. 1998 թւականից առ այսօր Հռչակաւոր մարդկանց եւ կարեւոր իրադարձութիւնների ԻՒՆԵՍԿՕ-ի օրացոյցում ներառւել է Հայաստանի Հանրապետութեան կողմից ներկայացւած 25 յոբելեանական տարեթիւ:

Նախորդ երկամեակի համար հաստատւել էին ՀՀ կողմից ներկայացւած Ներսէս Շնորհալու մահւան 850-րդ տարելիցի եւ ՀՀ ազգային կինոկենտրոնի 100-ամեայ յոբելեանի յայտերը»,-աւում է հաղորդագրութիւնում:

Panorama.am

Ցուցադրւել է «Բացակայ պատկեր» ֆիլմը՝

նւիրւած Արտաւազդ Փելեշեանին

«Մոսկւա» կինոթատրոնում կայացել է ռեժիսոր Հրանտ Վարդանեանի «Բացակայ պատկեր» ֆիլմի առաջին ցուցադրութիւնը՝ նւիրւած ռեժիսոր, սցենարիստ, դերասան, համաշխարհային կինեմատոգրաֆիայի դասական Արտաւազդ Փելեշեանին:

Միջոցառմանը ներկայ են եղել Արտաւազդ Փելեշեանի կինը՝ Այիդա Սարգսեանը, կինոաշխարհի ներկայացուցիչներ եւ կինոսէրներ:

Ֆիլմը ստեղծւել է փաստավաւերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիայի եւ «Արեւ» ֆիլմ-ստուդիայի համատեղ արտադրութեամբ: Ֆիլմի շնորհանդէսը կայացել է Հայ կինոյի 100-ամեայ յոբելեանական միջոցառումների շրջանակում՝ Արտաւազդ Փելեշեանին նւիրւած յոբելեանական ցուցադրութեամբ, որը կազմակերպել էր Հայաստանի ազգային կինոկենտրոնը:

«Այս ֆիլմը փորձ էր՝ խօսելու Փելեշեանի հետ իր լեզւով: Կինոյի նեարդը զգացող այս հսկան համաշխարհային կինոպատմութեան մէջ իր ուրոյն ձեռագիրն ունի: Նա իր փոքր պատուհանը բացեց կինոաշխարհում՝ իր արւեստով շատ կարծրատիպեր կոտրելով: Ես հասկացայ, որ կինոն կարող է լինել առանց խօսքի, եւ միեւնոյնն է՝ դու հասկանաս, թէ ինչ է այն ուզում ասել»,- ասել է «Բացակայ պատկեր» ֆիլմի ռեժիսոր Հրանտ Վարդանեանը:

«Բացակայ պատկեր» ֆիլմը սեւ-սպիտակ է: Ֆիլմը նկարելիս ռեժիսորն օգտագործել է նաեւ հատւածներ՝ Արտաւազդ Փելեշեանի տարբեր ֆիլմերից: Դրանք հիմնականում կինոէկրանին են ու տարբեր առիթներով ցուցադրւում են տարբեր քաղաքների կինոդահլիճներում:

«Բացակայ պատկեր» ֆիլմի կադրերում Արտաւազդ Փելեշեանը տիկնոջ հետ շրջում է այն վայրերով եւ քաղաքներով՝ Լիսաբոն, Փարիզ, Լիոն, Երեւան, որտեղ Վարպետի հետ հանդիպումներ են կազմակերպւել: Նրա վարպետութեան դասերը, խօսքը, կինոցուցադրութիւնները նկարահանւել են՝ որպէս փաստագրական նիւթ:

168.am

Թաներ Աքչամ.

«Անկարայի կառավարութիւնը Միութիւն եւ առաջադիմութիւն կուսակցութեան շարունակութիւնն էր»

(Շարունակութիւն նախորդ համարից)



Լօզանի պայմանագրի 30-րդ եւ 36-րդ յօդուածները կարգաւորում են քաղաքացիութեան իրաւունքը: Ըստ դրա՝ Օսմանեան պետութեան սահմաններում ստեղծուած նոր պետութիւններից ով որտեղ մնար, կը դառնար այդ երկրի քաղաքացի: Բայց նրանց քաղաքացիութեան իրաւունքները, ովքեր ցանկանում էին վերադառնալ նախկինում ապրած վայրեր, վերականգնուելու էին երկու տարուայ ընթացքում: Իւրաքանչիւր ցանկացող կարող էր վերադառնալ եւ այս ժամկէտում յետ ստանալ իր ունեցուածքը: Բացի այդ, նրանք, ովքեր չեն վերադարձել, շարունակելու էին իրաւունքներ ունենալ իրենց ունեցուածքի նկատմամբ: Լօզանի կէտերի յայտնի դառնալուց յետոյ հայեր են եղել, ովքեր վերադարձել են 1923 եւ 1924 թթ.: 1923 թ. օգոստոսին նաւերով ԱՄՆ-ից ժամանածներին թոյլ չեն տուել մտնել իրենց երկիր: 1924 թ. կային մարդիկ, ովքեր կաշառք տալով՝ յաջողացրել էին երկիր մտնել: Լուրը լսելը մեծ ճգնաժամ առաջացրեց, քանի որ ներգրաւուած էր նաեւ կաշառակերութիւնը: Մամուլն անդրադարձաւ խնդրին, եւ այն վերածուեց կառավարական ճգնաժամի: Մի նախարար հրաժարական տուեց, եւ բազմաթիւ աւագ պետական պաշտօնեաներ հեռացուեցին աշխատանքից: Այնինչ հայերի մուտքին երկիր՝ օրէնքով հակասող ոչինչ չկար: Բայց կառավարութիւնը չցանկացաւ, որ ոչ մի քրիստոնեայ վերադառնայ: Այդ նպատակով ճանապարհորդական հրահանգները ստեղծուեցին 1924 թ. յուլիսի 2-ին:

Հրահանգը ապարտհէյդի համակարգի կարեւոր անկիւնաքարն է: Քաղաքացիները բաժանուել են երկու խմբի: «Թուրքահպատակ մուսուլմանների» եւ հայ, յոյն եւ հրեայ քաղաքացիների: Մուսուլմանները կարող էին վերադառնալ՝ անկախ իրենց հեռանալու պատճառներից: Սակայն հայ, յոյն եւ հրեայ քաղաքացիներին արգելուած էր վերադառնալ երկիր: Միայն Անկարայի ազգային կառավարութեան թոյլտուութեամբ եւ անձնագրով մեկնածները կարող էին վերադառնալ: Նրանք, ում վերադարձը ցանկալի չէր, օրէնքում սահմանուել են որպէս «տարբեր ցեղերի պատկանողներ, որոնց վերադարձն անցանկալի է»: Նոր ընդունուած այլ օրէնքներով թուրքական ցեղի օտարերկրեայ քաղաքացիները սահմանուեցին որպէս «շատ արժէքաւոր կապիտալ», եւ նրանց խրախուսեցին մուտք գործել երկիր:

Այս առումով շատ կարեւոր է 1931 թ. թւագրուած մի փաստաթուղթ, որը նկարագրում է Ներքին գործերի նախարարութեան անվտանգութեան գլխաւոր վարչութեան ներքին կառուցուածքը: Առաջին մասնաճիւղը ստացել է Քաղաքական մասով առաջին մասնաճիւղ անուանումը: Մասնաճիւղը բաժանուած էր չորս մասի: Երկրորդ մասի պարտականութիւնը հետեւեալն էր. «Զբաղուել թուրքահպատակ կամ օտարահպատակ բոլոր դաւանանքի այդ թւում՝ Հայ առաքելական, բողոքական, կաթոլիկ հայերի, Թուրքիայի կամ օտարերկրացի յոյների եւ հրեաների գործունէութեան, քաղաքական գործիչների նոյնականացմամբ եւ համայնքային գործերին հետեւելով, ինչպէս նաեւ ոչ մուսուլմանների բոլոր կրնական եւ ազգային հաստատութիւնների բացայայտմամբ եւ հետեւումով, եւ ոչ մահմեդական փախածների երկիր վերադառնալու հարցերով»:

Այս փաստաթղթի լեզուն շատ պարզ է: Անվտանգութեան գլխաւոր վարչութեան կազմում ստեղծուեց ստորաբաժանում՝ շարունակելու իթթիհադականների քաղաքականութիւնը եւ քրիստոնեաներին երկիր չթողնելու, երկրում գտնուողներին վտարելու եւ նրանց, ում չէին կարող վտարել, որպէս երկրորդ կարգի քաղաքացիներ պահելու համար: Կարելի՞ է արդեօք սրանից աւելի յստակ պատկերացում կազմել ապարտհէյդի ռեժիմի մասին:

1923 թ. յետոյ հայերին, աւելի ճիշտ՝ ոչ մահմեդականներին, որոշ ժամանակով արգելուեց ճանապարհորդել (ապատ տեղաշարժուել-Ակունքի խմբ.) երկրի ներսում: Ինչպիսի՞ տրամաբանութիւն է կիրառւում այստեղ:

Ճամբորդելու արգելքներն սկսուել են Յեղասպանութեան ընթացքում: Հանրապետութեան շրջանում ճանապարհորդելու արգելքի ամենակարեւոր պատճառներից մէկը Ստամբուլի հայերի, յոյների եւ հրեաների տնտեսական կեանքին հարուած հասցնելն էր: Գործարարները, յատկապէս վաճառականները, այս արգելքի պատճառով չէին կարողանում առեւտուր անել Անատոլիայի հետ եւ շարունակել տնտեսական գործունէութիւնը: Բայց այս արգելքի պատճառով, օրինակ, Ստամբուլում ապրողները չէին կարող գնալ իրենց ամառանոցները: Արգելքները շարունակուեցին մինչեւ Երկրորդ Համաշխարհային պատերազմի աւարտը: Սա ապարտհէյդի ռեժիմի յստակ ցուցիչ էր:

1930-ականներին միտում կար՝ թոյլ չտալ հայերին ապրել գիւղաքաղաքներում ու գիւղերում: Թւում է, թէ դա չի տարածւում ողջ Թուրքիայի վրայ, բայց կարծում եմ, որ որոշ շրջանների հայերը չեն կարողացել խուսափել տեղահանութիւնից:

Սա տարածուել է ողջ Թուրքիայի վրայ: Կենտրոնացումը, յատկապէս գիւղական վայրերում, համարւում էր անվտանգութեան լուրջ սպառնալիք: 1930-ականներին Դերսիմի գիւղերում յատուկ ռազմական խուզարկութիւններ են իրականացուել, եւ յայտնաբերուած հայերի մասին զեկոյցներ են գրուել: Սասունի գործողութիւններում գերի ընկածները բռնի աքսորուել են Սիրիա: Որոշ շրջաններ յայտարարուել են ռազմական սահմանափակ գօտիներ՝ հայերին արտաքսելու համար: Համապատասխան օրէնքի համաձայն՝ օտարերկրացիներին արգելւում էր բնակուել այդ տարածքներում: Հայերը, ովքեր Թուրքիայի Հանրապետութեան քաղաքացիներ էին, «օտարներ» յայտարարուելով՝ բռնի կերպով հեռացուեցին այս շրջաններից:

Մնացած քչերին ձեռք չտուեցին, բայց ամէն տարի նահանգապետերից տեղեկութիւններ էին ուզում իրենց շրջանների հայերի թւի մասին: Հարցերի թւում էր, թէ այս հայերից քանիսն էին «տեղացի», իսկ քանիսը՝ եկւոր: Նահանգապետերի զեկոյցները բաւարար չեն համարուել: Ամէն տարի մարզեր էին ուղարկում կանոնաւոր տեսուչներ եւ զեկոյց կազմում հայ բնակչութեան եւ հայութեան տնտեսական վիճակի փոփոխութեան մասին: Արձանագրում էին տնտեսական ակտիւներ, ինչպիսիք են ապրանքները, գոյքը եւ ընկերութիւնները: Նման ստուգումների արձանագրութիւնների օրինակներ գրքքումս կան: Հարցը, որին պէտք է պատասխանել, սա է. ինչո՞վ ենք բացատրում հայերի նկատմամբ այս գործելաոճը, որոնց թիւը գրեթէ հասցրուել էր վերացման մակարդակի: Երկրի անվտանգութեան համար վտանգ չներկայացնող այս մարդկանց

(Շար. 6-րդ էջում)

Ինչո՞ւ է Ադրբեջանն ուզում ուղիղ բանակցել Հայաստանի հետ

Քաղաքագէտի պարզաբանումը

Պաշտօնական Երեւանը նոյեմբերի 21-ին ադրբեջանական կողմին փոխանցեց յարաբերութիւնների կարգաւորման մասին համաձայնագրի իր՝ թւով 6-րդ խմբագրութիւնը: Դրան հետեւեց Ադրբեջանի ԱԳ նախարարութեան մեղադրանքը՝ ուղղուած Հայաստանին գործընթացը ձգձգելու համար: Ադրբեջանը, որ նախ նախընտրում էր բանակցել Արեւմուտքի, ապա Ռուսաստանի միջնորդութեամբ, յետոյ՝ 3+2 ձեւաչափով, երէկ հայկական կողմին կոչ արեց սկսել երկկողմ բանակցութիւններ՝ առաջարկելով հանդիպման վայր դիտարկել նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի պետական սահմանը:

Բաքւի այս յայտարարութիւնների բովանդակութեան փոփոխութեան, ցուցաբերած շտապողականութեան, համաձայնագրի խմբագրումների վերաբերեալ Panorama.am-ը զրուցել է քաղաքագէտ Ստեփան Դանիէլեանի հետ:

Panorama.am- Պարոն Դանիէլեան, արդէն վեցերորդ անգամ խմբագրւում է խաղաղութեան համաձայնագիրը:

Ստեփան Դանիէլեան- Գիտէ՞ք ինչ, համաձայնագրերը կարող են միլիոն անգամ խմբագրուել: Համաձայնագրերն իրավիճակ են փոխում: Բայց քանի որ հարցն աշխարհաքաղաքական է, իսկ աշխարհում տեղի են ունենում վերաձեւաւորման գործընթացներ ու միգուցէ մօտակայ երկուերեք տարին շարունակւեն, մինչեւ նոր աշխարհակարգ ձեւաւորուի: Թէժ կէտերում՝ Արցախ, Ուկրաինա, Մերձաւոր Արեւելք եւ այլն, եւ այլն, այդ պրոցեսները երկար են տեւելու, այդ պատճառով ֆիքսացիա հնարաւոր չէ, քանի որ պայմանագիրն իրավիճակի ֆիքսում է նշանակում:

Panorama.am- Ինչպէ՞ս էք մեկնաբանում Ադրբեջանի յայտարարութիւնների փոփոխութիւնը՝ նախընտրելի բանակցութիւնների մասին:

Ստեփան Դանիէլեան- Ամէն բան բաւականին պարզ է: Արցախի խնդիրն աշխարհաքաղաքական է: Ամբողջ հարցը ռեգիոնի ազդեցութեան փոփոխութիւնն է: Հէնց այդ պատճառով էլ Արցախի պատերազմը սկսուեց, եւ՝ ամէն կողմ, նկատի ունեմ Ռուսաստանն ու Արեւմուտքը, իրենց յաջող սցենարն ունէին: Հիմա յաջող սցենարը կախուած է նրանից, թէ պայմանագիրը կամ բանակցութիւնները որ հարթակում են տեղի ունենալու՝ Ռուսաստանո՞ւմ, թէ՞ Արեւմուտքում:

Կայ նաեւ երկրորդ խնդիրը: Արցախում հիմա հայ չկայ, բայց բոլորը խօսում են հայերի վերադարձի մասին, իսկ հայերի վերադարձը պէտք է ապահովեն ինչ-որ միջազգային ուժ: Ո՞վ է լինելու այդ ուժը, այսինքն, Ադրբեջանի տարածքում ո՞ւմ զօրքերն են կանգնած լինելու: Այստեղ գալիս է աշխարհաքաղաքական խնդիրը, թէ բանակցութիւնները որ հարթակում կը լինեն: Տարածաշրջանում վեկտորների փոփոխութիւն է եղել, Հայաստանը գնացել է դէպի արեւմտեան վեկտոր, Ադրբեջանն էլ արդէն ռուսական հարթակում է յայտնուել, տեղի է ունեցել դերերի փոփոխութիւն:

Հիմա Ադրբեջանը շատ մտահոգուած է, որ Արցախի հարցը բաց է մնացել, Արցախի հայերի իրաւունքների հարց կայ, իսկ դրա յետեւում կանգնած է հարցը, թէ ով է ապահովելու այդ իրաւունքները եւ ում զինուած ուժերն են լինելու այնտեղ: Այստեղից հետեւում է, թէ ում ազդեցութեան գօտի կը լինի: Ադրբեջանի համար կարեւոր է, որ այդ հարցը փակւի, իսկ հարցը կարող է փակուել, երբ Հայաստանն է ընդունում: Պայմանագրի պայմանների հիմնական խնդիրը դրա մէջ է: Քանի որ արդէն Արեւմուտքից ճնշում կայ Ադրբեջանի վրայ, իսկ Ռուսաստանի համար Ադրբեջանը կարեւոր է Իրանի հետ կապն ապահովելու համար, այս առումով Ադրբեջանը յայտնւում է Իրան-Ռուսաստան ազդեցութեան գօտում, ինչն իրենք չեն ուզում, քանի որ ռեգիոնում Թուրքիայի թուլացում է գնում, Ադրբեջանն ուզում է, որ լինեն ուղիղ բանակցութիւններ, որպէսզի կարողանան նաեւ իրենց պայմանները պարտադրել:

Panorama.am- Կարծէք, ռուս-ուկրաինական հակամարտութիւնը մօտ է աւարտին, շատերն են խօսում, որ իրավիճակը փակուղում է, պէտք են բանակցութիւններ: Այդ հակամարտութեան հնարաւոր աւարտից յետոյ ինչպիսի՞ կարգաւորումներ են հնարաւոր Հարաւային Կովկասում:

Ստեփան Դանիէլեան- Ես Ձեզ ուրիշ բան ասեմ: Այն, ինչ կատարւում է Ուկրաինայում, Իսրայէլում, Տայւանում, Հայաստան-Ադրբեջանում, բոլորը պէտք է դիտարկել մէկ ընդհանուր փաթեթի մէջ: Եթէ մի կողմը մի տեղ ինչ-որ բան է ձեռք բերում, այլ տեղում գնում է զիջման: Ենթադրենք, եթէ Ուկրաինայի մի մասը զիջեն Ռուսաստանին, կարող է Ռուսաստանը զիջի Հարաւային Կովկասը: Այսինքն, այս խնդիրների լուծումը փաթեթային է:

Panorama.am

Ֆլորա Մարտիրոսեանի ձայնը երկրորդը չունի

Երգչուհու մասին յիշում են կոլեգաները

Նոյեմբերի 20-ին ՀՀ վաստակաւոր արտիստ Ֆլորա Մարտիրոսեանի յիշատակի օրն է: Երգչուհու անցած ուղու, յիշողութիւնների մասին Oragir.News-ը խօսել է երգչուհու կոլեգաների հետ:

«Դժուար հարց տուեցիք... Մենք շատ մօտ ընկերներ ենք եղել, մէկ բեմում միասին բազմաթիւ ելոյթներ ենք ունեցել, բայց նոյն կոլեկտիւում երբեք չենք աշխատել: Յետոյ նա գնաց Ամերիկա, մի տեսակ հեռացանք, բայց երբ գալիս էր, առիթ էր լինում, հանդիպում էինք շատ ջերմութեամբ: Նա բարձրաձաշակ երգչուհի էր, երգում էր գեղեցիկ հայերէնով, հմայիչ, ազդեցիկ, տպաւորիչ ձայն ունէր: Շատ հաճելի էր լսել իրեն, եւ իր ունկնդիրները շատ-շատ էին: Նաեւ շատ հայրենասէր աղջիկ էր: Չգիտեմ, թէ այս դէպքերի կապակցութեամբ ինչպիսի արձագանգ կը տար. երբեւէ չէինք մտածում այս մասին: Ցնցուեցի, երբ իմացայ իր հետ կատարուածը: Շատ դժուար ու ծանր զգացողութիւններ ունեցայ, որովհետեւ նախ շատ երիտասարդ էր եւ յետոյ՝ նա շատ պիտանի երգչուհի էր մեր ժողովրդի, մեր ազգի համար: Եւ իմ լաւագոյն ընկերուհիներից էր»,- մեզ հետ զրոյցում պատմեց ՀՀ ժողովրդական արտիստ Թովմաս Պողոսեանը:

Oragir.News-ը զրուցեց նաեւ Հայաստանի վաստակաւոր արտիստ Արսէն Գրիգորեանի՝ Մրոյի հետ, որն էլ յիշեց երգչուհու հետ իր ունեցած յիշողութիւնների մասին:

«Նախ՝ ինձ համար մեծ պատիւ էր, որ ինչպէս որ ժամանակ միասին եղել ենք «Ժողովրդական երգիչ»-ի ժիւրիի կազմում: Շատ հաճելի եւ պարտաւորեցնող էր լինել ինձ համար մեծանուն երգչուհու՝ տիկին Ֆլորայի հետ այդ նոյն կարգավիճակում: Պիտի ասեմ նաեւ, որ Ֆլորա Մարտիրոսեանի ձայնը երկրորդը չունի. ես միշտ ասել եմ, որ այդ ձայնը ծիրանի նման է, թաւիշ է: Շատ բան սովորեցի իրենից եւ կարծում եմ, որ իւրաքանչիւր երգիչ շատ բան սովորած կը լինի: Շատ հաճելի յիշողութիւններ ունենք միասին, բայց նման բան կայ. երբ շփւում ես մեծութեան հետ, մի քիչ աւելի կաշկանդուած ես, զուսպ ես, նոյնը՝ իմ պարագայում: Երբ իմացայ, որ չկայ, մեծ ցաւ ապրեցի՝ ինձ համար առաւել եւս ցաւալի էր. երբ երիտասարդ տարիներին նոր էի սկսել երգարուեստում կայանալ, մեր մեծ երգիչներից լսում էի եւ նմանօրինակ ճանապարհ էի ուզում կերտել հէնց նաեւ Ֆլորա Մարտիրոսեանի օրինակով: Ֆլորա Մարտիրոսեանի կորուստը մեծ ցաւ էր. այն տեղը, որ նա էր լրացնում, ոչ ոք չի կարող լրացնել»: Յիշեցնենք, որ երգչուհին մահացել է 2012 թւականի նոյեմբերի 20-ին Լոս Անջելէսում՝ լեղապարկի վիրահատութիւնից յետոյ առաջացած բարդութիւնների պատճառով: Երգչուհու աճիւնը բերւել է Երեւան, որտեղ դեկտեմբերի 11-ին Արամ Խաչատրեան համերգասրահում հրաժեշտի արարողութիւն է տեղի ունեցել: Թաղուած է Երեւանի քաղաքային պանթէոնում:

Ալեքսանդր Շիրւանզադէ եւ Ռափայէլ Պատկանեան

Երկու մեծերի թշնամանքի պատմութիւնը

«Ահա մի մարդ, որի բնաւորութեանը աւելի կը համապատասխանէր զօրավարի պաշտօնը, քան համեստ բանաստեղծի կոչումը: Խրատել, հանդիմանել, ամենքի հետ խօսել «դու»-ով եւ միշտ բարձրաձայն՝ ահա Ռափայէլ Պատկանեանի առաջին աչքի ընկնող յատկութիւնը»,- այսպէս է իր գրչընկերոջը նկարագրել Ալեքսանդր Շիրւանզադէն:

Ալեքսանդր Շիրւանզադէն, որ աչքի էր ընկնում իր մանրախնդիր բնաւորութեամբ, ինքն էր բողոքում Ռափայէլ Պատկանեանի բնաւորութիւնից: Նա իր յուշերում գրում է.

«Գամառ-Քաթիպան բանաստեղծի հեգութիւնը չունէր: Նա չէր խօսում, այլ պատգամներ էր արձակում, չէր վիճաբանում, այլ թելադրում էր իր մտքերը ինքնավստահ մարգարէի եղանակով:

-Այդ մարդը կարծում է, որ ինքն է հայ ազգը,- ասում էր նրա մասին Րաֆֆին իր սովորական մեղմ ժպիտով:-Նա ամենքին խրատում է եւ ամենքին հրամայում:

Գամառ-Քաթիպան ապրում էր Նոր-Նախիջեւանում, ուր քաղաքային արհեստագիտական դպրոցի տեսուչ էր՝ 125 ռուբլի ամսականով: Ես շարունակ բողոքում էի, որ ժամանակակից ամենաառաջին բանաստեղծին ազգը ձգել է մի խուլ անկիւն:

-Ինչո՞ւ չէք աշխատում նրա համար մի յարմար պաշտօն գտնել եւ հրաւիրել նրան Թբիլիսի,- դարձայ ես մի օր Աբգար Յովհաննիսեանին, ով խոշոր կապեր ունէր:

-Ի՜նչ, ուրեմն դուք կամենում էք, որ նա գայ այստեղ եւ երկու օր չանցած մեզ կռուեցնէ՞:

-Ինչպէ՞ս,- հարցրի ես:

-Լսեցէք: Մի օր նա իմ տանը ճաշի էր: Յանկարծ նա հարցնում է ինձ. «Աբգար, ասա խնդրեմ, ի՞նչ է գտել Գրիգոր Արծրունին այդ տիկին Մարոյի մէջ, եւ Մարօն Գրիգորի մէջ, որ իրարու վրայ սիրահարւել են»: Ես կատակով պատասխանեցի. «Գիտէք, կան զոյգեր, որոնց Աստուածն է ասել. «Սիրեցէք միմեանց, ապա թէ չէ ոչ մի սատանայ ձեզ չի սիրելու»:

Հետեւեալ օրը Ռափայէլը հրաւիրուած էր Արծրունու մօտ: Ճաշի միջոցին նա բաժակը բարձրացնում է եւ խմելով Արծրունու ու տիկնոջ՝ կենացը, բառ առ բառ կրկնում է իմ խօսքերը՝ յիշելով իմ անունը: Արծրունին, իհարկէ, վրդովւում է, եւ այդ օրից իսկապէս սկսւեց նրա թշնամութիւնը իմ դէմ»:

Ռուբէն Մամուլեան. լեգենդար ռեժիսորը

Ռուբէն Մամուլեանը ծնւել է 1897 թւականի հոկտեմբերի 8-ին Թբիլիսիում, իսկ նրա ամբողջ մանկութիւնն անցել է Փարիզում: Նրա հայրը՝ Զաքար Մամուլեանը, բանկիր էր եւ ցանկանում էր, որ որդին ինժեների կրթութիւն ստանայ: Բայց Մամուլեանը մանկուց ձգտում էր դէպի արուեստը եւ սիրում էր երաժշտութիւնը: Աւելի ուշ Ռուբէնը տեղափոխւել է Մոսկւա եւ ստացել իրաւաբանի կրթութիւն: Նա արուեստի մասին չի մոռացել եւ յաճախել է Մոսկւայի Գեղարուեստական թատրոնին կից Եւգենի Վախթանգովի երեկոյեան դասերին: Սակայն յեղափոխական իրադարձութիւնների պատճառով նա լքել է Մոսկւան եւ գնացել տուն՝ Թբիլիսի:

Բայց Ռուբէնին առաջարկել են տեղափոխւել Ամերիկա եւ օպերային ներկայացումներ բեմադրել: 1922 թւականին Մամուլեանը տեղափոխւում է ովկիանոսից այն կողմ եւ հաստատւում Ռոչեսթեր քաղաքում, որտեղ դառնում է օպերային ստուդիայի կազմակերպիչներից մէկը: Ընդհանուր առմամբ, Բրոդուէյի թատրոններում Ռուբէն Մամուլեանը բեմադրել է աւելի քան 45 միւզիքլ եւ դրամատիկական ներկայացում:

Բնածին ճաշակով եւ խելքով նա իր հետքն է թողել կինոարտադրութեան կայացման գործում: Նա նկարահանել է 16 ֆիլմ: Մամուլեանն առաջիններից էր, որ նկարահանել է ձայնային միւզիքլ՝ սկիզբ դնելով Ամերիկայում յայտնի այս ժանրին: Մամուլեանի ռեժիսորական ֆիլմերը 12 անգամ ներկայացուել են Օսկարի:

Մեծ կինոփորձագէտ Ռուբէն Մամուլեանը վերջին տարիներն անցկացրել է Հոլիվուդում: Վարպետը մահացել է 1987 թւականի դեկտեմբերի 5-ին:

Հայկ Բադիկեան

Հայ նշանաւոր քանդակագործը

Հայկ Բադիկեանը ծնւել է Վան քաղաքում 1876 թ.-ին: Երիտասարդ տարիներին տեղափոխւել է Սան Ֆրանցիսկո աւագ եղբօր՝ Խորէնի մօտ, որն արդէն այդ ժամանակ նկարազարդումներ էր անում թերթերի համար: Այստեղ Հայկը հետաքրքրւել է քանդակագործութեամբ: Դիտարկելով ճանաչւած վարպետների աշխատանքները՝ նա սկսել է ստեղծել իր առաջին գործերը:

Աշխատասիրութեան շնորհիւ յաջողութեան հասնելով ԱՄՆ-ում՝ Բադիկեանը մեկնել է Ֆրանսիա՝ վարպետութիւնը կատարելագործելու: Փարիզում քանդակագործն այցելել է Օգիւստ Ռոդէնին: Նա վարպետին ցոյց է տւել իր աշխատանքներից մի քանի լուսանկար: Ռոդէնը, կանգնեցնելով հայեացքը «Դիանայի որս»-ը քանդակի լուսանկարում, խոստովանել է. «այո՛, պարո՛ն, Դուք քանդակագործ էք»:

Բադիկեանը ակտիւ մասնակցութիւն է ունեցել Սան Ֆրանցիսկոյի «Բոհեմեան ակումբի» կեանքին: Ակումբը հիմնադրուել է 1872 թւականին եւ հաւաքել է յայտնի լրագրողների, նկարիչների, երաժիշտների, հետագայում նաեւ գործարարների եւ ձեռներէցների: Բադիկեանը երկու անգամ ընտրուել է այդ ակումբի նախագահ, որը գործում է մինչ օրս:

Քանդակագործի աշխատանքները կարելի է տեսնել Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետարանի շրջակայքում եւ ներսում, ինչպէս նաեւ Օքլենդի թանգարանի հաւաքածուում:

Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետարանի շէնքի մօտ կանգնեցուել է ԱՄՆ 16-րդ նախագահ Աբրահամ Լինքոլնի յուշարձանը, որը վերացրել է ստրկութիւնը: Բրոնզէ քանդակի հեղինակը Հայկ Բադիկեանն է:

Լեգենդար քանդակագործը մահացել է 1950 թւականին:

«Անկարայի...

(Շար. 5-րդ էջից)

նկատմամբ իրականացնող գործելաոճը պէտք է ընդունել որպէս ռասիզմի վառ օրինակ:

Այսպիսի մի բան հարցնեմ. Յակոբ Մարթայեանը, ստիպւած լինելով փոխել ազգանունը (Դիլաչար), իր տեղն է գտնում ռեժիմում: Պերճ Քերեսթեճեանը եւս փոխել է ազգանունը (Թուրքեր) եւ դարձել պատգամաւոր: Նմանատիպ ուրիշ օրինակներ էլ կան: Արդեօք այս օրինակները հակասո՞ւմ են ձեր թէզին, թէ՞ դրանք ինչ-որ կերպ աջակցում են թէզին:

Իհարկէ, աջակցող օրինակներ են: Ամերիկայի ամենաուժեղ ստրկական համակարգով նահանգը Վիրջինիա նահանգն էր: Բայց այստեղ կային նաեւ սեւամորթ ստրկատէրեր: Կարո՞ղ է արդեօք սեւամորթ ստրկատէրերի գոյութիւնը արդարացնել ստրկութեան առկայութիւնը: Թուրքիայում էլ, ցուցադրութեան համար ժամանակ առ ժամանակ յատուկ թոյլտուութիւն էին տալիս հայ, յոյն կամ հրեայ պատգամաւորներին, ընդգրկում էին խորհրդարանում եւ այլն: Այն, ինչ ես վերը բերեցի, բաւարար է այս երկրում ապարտհէյդի ռեժիմի գոյութիւնը յստակ ցոյց տալու համար:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ այս երկրում հաստատւել է բացայայտ ապարտհէյդի ռեժիմ՝ մի շարք բացայայտ կամ գաղտնի օրէնքներով եւ հրամանագրերով, որոնք հրապարակւել են 1920 թ. ապրիլին նոր խորհրդարանի բացումից յետոյ, որը համարւում է ժամանակակից Թուրքիայի սկիզբը: Այս օրէնքներից ու հրամանագրերից շատերն այսօր էլ ուժի մէջ են: Այն դէպքերում, երբ դրանք ուժի մէջ չեն եղել, դրանց սխալ լինելու մասին չնչին հաշւետուութիւն անգամ չի եղել: Այս օրէնքների ոգին եւ գոյութիւնը շարունակում են ինքնտիտուցիոնալ ազդեցութիւն ունենալ:

Այս հարցազրոյցում քննարկեցինք ապարտհէյդի ռեժիմը, որը ստեղծւել էր յատուկ հայերի համար, որոնք գտնւում էին դասակարգման համակարգի ստորին հատւածում: Քրդերի ու ալեւիների մասին անգամ չյիշատակեցինք… Խնդիրը հետեւեալն է. հանրապետութեան հարիւրամեակն է, բայց դեռ յայտնի չէ, որ երկրում գործում է ապարտհէյդի ռեժիմ, դրա կարեւոր պատճառներից մէկն այն է, որ այս ռեժիմը հաստատւել է ծայրայեղ «նենգօրէն ու խորամանկօրէն»: Այն, ինչ թաքնւած է այս «նենգութեան ու խորամանկութեան» յետեւում՝ թուլութիւնից բխող վախն է: Հետաքրքիր աւանդոյթ կայ, որը Աբդուլ Համիդից անցել է իթթիհադականներին, նրանցից էլ՝ Անկարայի ռեժիմին. ռեժիմները գիտեն, որ թոյլ են եւ վախենում են, որ եթէ քրիստոնեաների դէմ բռնի միջոցներ ձեռնարկեն, դա արտաքին միջամտութեան հնարաւորութիւն կը ստեղծի: Այդ իսկ պատճառով նրանք փորձում են իրենց բռնի ելոյթները կոծկել «նենգ ու խորամանկ» մեթոդներով: Ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքների հետ կապւած ոչ մի խնդիր չի լուծի, մինչեւ չնկատւի այս երկրում գործող «նենգ ու խորամանկ» ապարտհէյդի ռեժիմը, որն առաջացել է Աբդուլ Համիդից յետոյ պահպանւած այս վախկոտութիւնից: Սա է դառը ճշմարտութիւնը:

Թարգմանեց Տիգրան Չանդոյեանը

Akunq.net

(Շար. 2 եւ վերջ)

ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Մահը մերն է մենք մահինը
Մարդու գործն է միշտ անմահ:
(Յովհ. Թումանեան)

Խոր վշտով համակուած մեր վշտակցութիւնն ենք յայտնում՝ սիրելի Լալա Հաթամզադէին, Հաթամզադէ ընտանիքին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝ խմբիս գործունեայ եւ թանկագին անդամ՝

ՆԱՐԲԷ ՀԱԹԱՄԶԱԴԷԻ

վաղաժամ եւ ցաւալի մահուան առթիւ:

«ՆՈՐ ԴԱՐ» ԱՍՄՈՒՆՔԻ ԽՈՒՄԲ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ

(2023-2024 տարեշրջան)

«Թոյլ տուէք այդ մանուկներին եւ մի՛ արգելէք, որ ինձ մօտ գան, որովհետեւ երկնքի արքայութիւնը այդպիսիներինն է»: (Մատթէոս ԺԹ 14)

Այսու ուրախութեամբ յայտնում ենք, որ բարձր տնօրինութեամբ **թեմիս բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Ս. արք. Սարգսեանի** ս. թ. նոյեմբերի 26-ից վերսկսւում են Թեհրանի Հայոց թեմի Կիրակնօրեայ դպրոցների աշխատանքները: Եկեղեցու հովանու ներքոյ գործող հոգեւոր այս կենտրոնը նպատակ ունի Հայ նոր սերունդին տալով քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութիւն՝ նրան հաղորդ դարձնի Հայ եկեղեցու կեանքին եւ վարդապետութեանը:

Մեր զաւակներին քաջալերելով մասնակցելու այս դասընթացներին՝ նրանց օգնում ենք՝ զինուելու հոգեւոր սպառազինութեամբ, որպէսզի աւելի ապահով քայլերով մուտք գործեն կեանքի ասպարէզ, հեռու մնալով նոր աշխարհի հնարաւոր վնասակար հողմերից եւ որպէս ազնիւ քրիստոնեայ եւ գիտակից հայ՝ ամենայն իմաստութեամբ իրենց ապագան կերտեն:

Դասարանները կազմուելու են տարիքային յատուկ բաժանումներով՝ 5-ից վեր տարիք ունեցող աշակերտների եւ ուսանողների համար:

Աշխատանքները տեղի կունենան հետեւեալ ծրագրի համաձայն.

Շրջան	Վերսկսման թւական	Աշխատանքի վայր	Օր	Դասարաններ	Ժամ
Ս. Սարգիս եկեղեցի	նոյեմբերի 30-ին	«Ռոստոմ» համալիր	հինգշաբթի	5-ից վեր բոլոր տարիքի եւ կանանց դասարաններ	16:00 - 17:15
Սբ. Թարգմանչաց եկեղեցի	նոյեմբերի 26-ին	Սբ. Թարգմանչաց եկեղեցի	կիրակի	5-ից վեր բոլոր տարիքի եւ կանանց դասարաններ	16:30 - 17:45 17:45 - 19:00
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի	նոյեմբերի 26-ին	Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի	կիրակի	5-15 տարեկաններ (չորս դասարաններ) եւ կանանց դասարաններ	17:00 - 18:15
				16-24 տարեկաններ (երկու դասարաններ)	18:15 - 19:30
				24 տարեկանից վեր	18:30 - 20:00

Արձանագրութեան համար դպրոցից ստացած յատուկ հարցաթերթիկը լրացնել եւ այն յանձնել կրօնի առարկայի ուսուցչին կամ փոխտեսուչին:

Յաւելեալ տեղեկութիւնների համար դիմել բնակւող շրջանի Կիրակնօրեայ դպրոցի պատասխանատուին կամ **88937974** համարով կապւել ազգային առաջնորդարան, Քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի գրասենեակ:

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՒԷՐ

Մի հայկական ծերանոց կարիք ունի

կին եւ տղամարդ աշխատողի եւ մի բուժքոյրի

Յաւելեալ տեղեկութիւնների համար կապւել սոյն հեռախօսահամարներին՝

09125336716 - 09125159109



Յարգելի նուիրատու

Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նուիրատուութեան համար:
«ԱԼԻՔ»-ի սիրտը բաբախում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:
Այս դժուարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւատք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամէն օր մուտք գործի Ձեր տուն:

Շնորհակալ ենք, որ Դուք կայք:

Յարգանօք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

Բանակցային....

(Շար. 1-ին էջից)

օգնութիւնների փոխանցումը:

Սրան անմիջապէս հետեւեցին համացանցում յայտնուած այն տեսանիւթերը, որոնցում ցուցադրուած են իսրայէլական հրկիզուած նաւի պատկերները, ինչը հաւաստի աղբիւրների համաձայն՝ թիրախաւորել է Եմէնի «Անսարօլլահ»-ի արձակած հրթիռների միջոցով: «Սա սիոնիստական նաւի լուսանկարն է, որը թիրախաւորել է անտեսանելի նետով: Սիոնիստները վերջապէս պէտք է հասկանան, որ ճակատամարտը շարունակւում է, աւելի քան 20 հազար անմեղ պաղեստինցի նահատակների վրէժը դահիճներին զեհեն է ուղարկելու մինչեւ վերջին զոհի արեան վերջին կաթիլի հատուցում...»,- գրել է ռազմական հարցերով փորձագէտ եւ գեներալ Սոլէյմանիի հետ ճակատ կտրած Քարիմ Ջաֆարին:

Նա յաւելել է. «Այս ռեժիմի կսիեալ տնտեսութիւնը պէտք է ոչնչացի: Եթէ այն հարուածի տակ առնի ոչ մի օկուպանտ չի մնայ գրաւեալ հողերում: Սիոնիստ վաճառականները սեփականութեան իրաւունքը քողարկելով ու այլոց անունով երթեւեկելով չէ, որ կարող են վերահսկել իրենց ունեցուածքը: Նրանք այնքան ծանր են վճարելու, որ ոչ ոք այլեւս պատրաստ չի լինելու իրենց հետ գործ բռնել»:

Հումանիտար հրադադարի շրջանակում, երբ իսրայէլական կողմը շարունակում է մանր ու խոշոր տրամաչափի զինատեսակներով թիրախաւորել խաղաղ բնակչութեանը, Դիմադրրութեան շարժման ճակատայինները եւս անպատասխան չեն թողնում սիոնիստների վայրագութիւնները եւ պատասխան կրակով լռեցնում են հակառակորդի յենակէտերը: Յայտնի է, որ օկուպացած Պաղեստինի հարաւում գտնուող Ռամ-ալ-Ռասրաշ նաւահանգստի ուղղութեամբ շարունակւում են անօդաչու թռչող սարքերով հետախուզական թռիչքներն ու հրթիռակոծումը, մինչդեռ երէկ երեկոյեան նոյն այս հատուածում պատասխան կրակի հետեւանքով առնւազն 6 հզօր պայթիւն է լսւել: Այժմ լրատուամիջոցներում ու կիբերհարթակներում խօսւում է այն մասին, որ նաւահանգստում պայթիւնները շարունակւում են, իսկ ժամեր առաջ հրապարակւել են նաեւ պայթիւնի մասին պատմող մի քանի տեսանիւթ:

Մէկ այլ հաղորդման համաձայն Al-Mayadin-ը Էյլաթի երկնքում երկու պայթիւն է արձանագրել վկայակոչելով իսրայէլական կողմի քաղաքացի լրագրողների կողմից հրապարակուած տեսանիւթերը:

Քարիմ Ջաֆարին իր տելեգրամեան «Միրանխաբար» ալիքում գրել է, որ սիոնիստական ռեժիմը կարծում է, որ «հաւասարը-հաւասարին» բանակցելու արդիւնքում կարող է կորցնել իր արժանապատուութիւնը կամ կեղծ վեհութիւնը, որը կորցրեց այս պատերազմում: «Ապատեղեկատուութիւն են նաեւ այն հրապարակումները, իբր Գալանտը կատարցիներին ուղերձ է յղել, որ աւելի մեծ հարուածներով է յարձակւելու Գազայի վրայ, եթէ պատանդների հարցը չլուծի: Նոյնպէս սուտ է այն լուրը, որը վերահրապարակել են այդ ռեժիմի լրատուամիջոցները իբր փոխանակման միջնորդը ամերիկեան կառավարութիւնն է: Ինքը՝ Բայդէնը լաւ գիտի, որ տակդիրով ի վիճակի չէ դէմ առ դէմ դիմադրելու»,- գրել է նա:

«Այս ռեժիմն այս հարցում այլընտրանք չունի: Ամերիկեան կողմը շուտով ճնշում կը գործադրի Նեթանիահուի վրայ՝ տող առ տող իրականացնելու համաձայնագիրը, քանի որ ամերիկացի պատանդները դեռ մնում են պաղեստինեան կողմի ձեռքերում, իսկ «դիմադրրութիւնը» նրանց ազատումը յետաձգել է մինչեւ վերջին պահը, ինչը նաեւ իրավիճակը վերահսկելու նրանց ունակութեան մասին է խօսում»,- եզրակացրել է փորձագէտը:

Համացանցում դեռ շարունակւում են զարգացումների մասին հրապարակումները: Նշումների մասին վերնագրային տեսքով անդրադառնալու դէպքում կարելի է արձանագրել հետեւեալը. «Զոն Բոլթոն. «Գազան հասել է մեծ յաղթանակի» / «Պաղեստինի դիմադրութեան շարժում. «Մենք առայժմ կը դադարեցնենք գերիների փոխանակումը» / Սիոնիստների նաւը անհետացաւ ջրի երեսից / եմէնցիները թիրախաւորել են եւս մէկ այլ նաւ / Black Day of Eilat /...

Յ. Գ.-1- Առաջին լուսանկարը / Միայն եմէնցին կարող է հարցական նշան թիթ անել եւ հազար «լայք» ստանալ: «Անսարօլլահ»-ի պաշտօնեաների մտորումների տեսք ունեցող այս թիթը յստակ մեսիջի տեսք ունէր ուղղուած սիոնին:

Յ. Գ.-2- 2-րդ լուսանկար / Պաղեստինցի երեխան, ով հետաքրքրուած սպասում է գերութեան մէջ գտնուող մօր վերադարձին:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ՝ Ս. ԹԱԴԷՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այսու մեր սիրելի հաւապացեալ ժողովրդին յայտնում ենք, որ **թւականիս շաբաթ, դեկտեմբերի 2-ին, տօնն է սրբոց առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի եւ Բարթուղիմէոսի:**

Այդ օրը նաեւ **Ս. Թադէոս եւ Ս. Բարթուղիմէոս մատռան անուանակոչութեան տօնն է:** Այս առիթով **ուրբաթ, դեկտեմբերի 1-ին, Ս. Թադէոս եւ Ս. Բարթուղիմէոս մատուռում մատուցւելու է հանդիսաւոր ս. ու անմահ պատարագ եւ քարոզ.** կրօնական արարողութեան նախագահելու է թեմիս առաջնորդ՝

ԳԵՐԾ. Տ. ՄԵՊՈՒՀ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԸ

Սկիզբ ժամերգութեան՝ առ. ժամը 9:30-ին
Սկիզբ ս. պատարագի՝ առ. ժամը 10:00-ին
Քարոզ՝ առ. ժամը 11:00-ին

Յաւարտ ս. պատարագի՝ կատարւելու է ջրի օրհնութիւն:

Մեր ժողովրդի զաւակներին կոչ ենք ուղղում, որ հաւատքով եւ երկիւղածութեամբ մասնակցեն վերոյիշեալ կրօնական արարողութիւններին՝ հաղորդւելու համար սրբազան առաքեալների խորհրդով:

Ս. ԳԵՈՐԳ ԵՒ Ս. ԹԱԴԷՈՍ-ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ծանօթ.-

ՀԱՍՑԷ՝ Մոսթաֆա Խոմէյնի պողոտայ, Մոլաւի քառուղի, Հազրաթի շուկայ, Մուսաւի (Արամանէ) փողոց, համար 33, հայոց եկեղեցի: Հեռախօս՝ 55152029

Երթեւեկութեան համար նկատի են առնւել սահմանափակ թւով հանրակառքեր, որոնք ճանապարհւելու են առաւօտեան ժամը 9:00-ին, Ս. Սարգիս եկեղեցու, «Մասիս» անուշարանի եւ «Քաջ» անուշարանի մօտից:

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES
Qeshm Air
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸- ۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۳۷۴ ۱۰۲ ۲۲ ۸۲۴+ , ۳۷۴ ۹۶۵ ۷۵ ۳۰۵+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

Թուրքիայում յարձակումների ենթարկւած կրօնական գոյքի պատկանելիութեան առումով հայկականը երրորդ տեղում է



ՄՆ Միջազգային կրօնական ազատութեան յանձնաժողովը (USCIRF՝ պետական դաշնային մարմին է) նոր զեկոյց է հրապարակել, որն անդրադառնում է Թուրքիայում կրօնական իրաւունքներին: Մասնաւորապէս, այն նւիրւած է Թուրքիայում կրօնական կազմակերպութիւններին պատկանող սեփականութեան վիճակին:

Զեկոյցը հետաքրքրական է, քանի որ ներկայացնում է նաեւ հայկական եկեղեցական գոյքի մասին կարեւոր վիճակագրութիւն:

Այսպէս, 2003-2022 թթ. ընթացքում Թուրքիայում յարձակումների ենթարկւած կրօնական գոյքի պատկանելիութեան առումով հայկականը երրորդ տեղում է (ընդհանուր առմամբ գրանցւած 34 դէպք): Հայկականից զատ աւելի շատ է տուժել միայն ալեւիներին ու բողոքականներին պատկանող գոյքը: Հայկական եկեղեցական գոյքի վրայ յարձակումների մի մասը տեղի է ունեցել վերջին տարիներին:

Դրա պատճառների մասին ես գրել եմ «Ատելութեան խօսքի դասական թիրախները» գրքում:

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՂԱՄԵԱՆ
պ.գ.թ., թուրքագէտ
Yerkir.am

SET Coffee
فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه ست

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ -۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«ՄԵՋ....

(Շար. 1-ին էջից)

հաւատք ունենանք, յարատեւ պայքարի ճանապարհով քայլենք: Կամք, որ պայքարով կերտենք մեր ապագան, պայքարով կերտենք մեր հայրենիքը:

Եւ ուժականութիւն, ուժ, հարուածելու կարողականութիւն, եթէ չունես այդ ոչոք քեզ չի յարգելու: Եւ Միերը մեր ուժն էր, մեր հարուածն էր, մեր բազկի զարկն էր, Միերները այդպիսին էին: Եւ իմ կոչն է բոլոր Միերներին Հայաստանով մէկ վերակազմակերպւէք, զինւէք, կռի արուեստին տիրապետէք, այս իշխանութեան կամ առանց այս իշխանութեան մենք պայքար ունենք: Այս իշխանութեան կամ առանց այս իշխանութեան պէտք է այս երկիրը փրկել եւ դա չի լինում աղաչելով, ուրիշի գթասրտութեանը կառչելով, դա լինելու է միայն պայքարով:

Ես վստահ եմ, որ մի օր կրկին վերադառնալու ենք այստեղ: Վերադառնալու ենք մեր կուրծքը ուռած, մեր ճակատը բարձր, հպարտ ասելու ենք՝ մենք կռւում ենք, մենք պայքարում ենք, մենք շարունակում ենք քո գործը Միեր, եւ այսօրւայ պէս ընկճւած, ամօթով եւ գլխիկոր չենք լինի: Ես վստահ եմ այդ, որը գալու է, Միերների օրը գալու է, այլ ճանապարհ չկայ, անխուսափելիօրէն գալու է:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել
«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը
(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հեպեւեալ հասցէով.
Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝88761154
«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ